

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
11 ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 1998 Թ.
ԹԻՎ 44 ՈՐՈՇՄԱՄԲ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ _____

ՇՈԳՈՒ ԵՎ ՏԱՔ ՋՐԻ ՏԵՄՔՈՎ ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ
ՍԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ * (ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ)

" ____ " _____ 199 _ թ. Բ. _____

(վաճառող ձեռնարկության (ընկերության) անվանումը)

հետագայում՝ վաճառող ի դեմս _____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

դեկավարվելով ձեռնարկության (ընկերության) կանոնադրությամբ եւ Հայաստանի
Հանրապետության օրենսդրությամբ, մի կողմից եւ _____

(ձեռնարկության (ընկերության) անվանումը)

հետագայում՝ Գնորդ ի դեմս _____

(պաշտոնը, անունը, ազգանունը) որը,

դեկավարվելով ձեռնարկության (ընկերության) կանոնադրությամբ եւ Հայաստանի
Հանրապետության օրենսդրությամբ, մյուս կողմից, այսուհետեւ համատեղ կոչվելով
Կողմեր, կնքեցին սույն Պայմանագիրը հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը վաճառում, իսկ Գնորդը գնում է ջերմային էներգիա եւ վճարում
սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Կողմերի փոխհարաբերությունները կանոնակարգվում են Հայաստանի
Հանրապետության օրենսդրությամբ, "Էներգետիկայի մասին" Հայաստանի
Հանրապետության օրենքով, "Ջերմային էներգիայից օգտվելու կանոններով"
(այսուհետեւ ՋԷՕԿ) եւ սույն Պայմանագրով:

ՀՈԴՎԱԾ 2

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Պայմանագրում գործածված որոշ հասկացություններ սահմանված են

հետեւյալ կերպ:

2.1. Ջերմային էներգիա - էներգիա տաք ջրի կամ շոգու տեսքով, որն առաքվում է Վաճառողին եւ ընդունվում Գնորդի կողմից համաձայն սույն Պայմանագրի:

2.2. Գիզակալորիա կամ Գկալ-ջերմային էներգիայի չափման միավոր, որը հավասար է 4.187×10^9 Ջոուլի:

2.3. Հաշվետու ամիս - ամիս, որի ընթացքում կատարվում են ֆինանսատնտեսական գործառնությունները:

2.4. Խտուցք - շոգու կոնդենսացված մասը:

2.5. Հաշվառքի հանգույց - ջերմային էներգիայի քանակությունը հաշվառող չափիչ-ստուգիչ սարքերի համախումբ:

2.6. Ֆորս-մաժոր - արտակարգ եւ անկանխելի դեպքերի եւ հանգամանքների (տարերային աղետներ, ռազմական գործողություններ, էներգաաշարժների (վառելիք, ջուր) մատակարարման համակարգերի վթարներ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներ), տվյալ պայմաններում կողմերի կամքից անկախ առաջացած անհաղթահարելի ուժի հետեւանքներ, որոնք մասամբ կամ ամբողջությամբ, անհնար են դարձնում սույն պայմանագրի պայմանների իրականացումը, որի դեպքում կողմերը ազատվում են պատասխանատվությունից:

Պայմանագրում շեղատառերով գրված արտահայտությունները վերաբերվում են միայն ջերմային էներգիան շոգու տեսքով արտադրող իրավաբանական անձանց:

Պայմանագրում գործածված այլ սահմանումները մեկնաբանվում են ըստ ՋԷՕԿ-ի:

ՀՈԴՎԱԾ 3

ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳԻՆԸ

3.1. Վաճառող ջերմային էներգիայի համար Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի կողմից սահմանված (ներառյալ ԱԱՀ)՝

- o շոգու տեսքով (ճնշումը _ _ կգ/սմ² ջերմաստիճանը _ _ օC) _ - դրամ/Գկալ
- o շոգու տեսքով (ճնշումը _ _ կգ/սմ² ջերմաստիճանը _ _ օC) _ - դրամ/Գկալ
- o տաք ջրի տեսքով - - - դրամ/Գկալ

առավելագույն սակագներից ելնելով, Գնորդի համար ջերմային էներգիայի վաճառքի պայմանագրային գները (ներառյալ ԱԱՀ) սահմանվում են՝

- o շոգու տեսքով (ճնշումը _ _ կգ/սմ² ջերմաստիճանը _ _ օC) _ - դրամ/Գկալ
- o շոգու տեսքով (ճնշումը _ _ կգ/սմ² ջերմաստիճանը _ _ օC) _ - դրամ/Գկալ
- o տաք ջրի տեսքով - - - դրամ/Գկալ:

3.2. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի կողմից ջերմային էներգիայի սակագնի փոփոխության դեպքում, մինչեւ Պայմանագրի մեջ համապատասխան փոփոխություններ կատարելը կամ նոր Պայմանագրի կնքումը, ջերմային էներգիայի նոր սակագինն ուժի մեջ է մտնում հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետից:

ՀՈԴՎԱԾ 4

ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Վաճառողը պարտավորվում է՝

4.1.1. Սպահովել Գնորդի ջերմամատակարարումը՝ ըստ թիվ 1 հավելվածում նշված չափաբանակների եւ որակական ցուցանիշների:

4.1.2. Վերականգնել Գնորդի ընդհատված ջերմամատակարարումը - - - ժամվա ընթացքում (ոչ ուշ, քան ՋԷՕԿ-վ սահմանված ժամանակահատվածում՝ 24 ժամ), եթե ջերմամատակարարման ընդհատումը պայմանավորված չէ ՋԷՕԿ-ով եւ սույն Պայմանագրով սահմանված կարգով թույլատրվող դադարեցումներով կամ Գնորդի կողմից սպասարկվող ջերմամատակարարման համակարգի տարրերի անսարքություններով: Ջերմամատակարարման ընդհատման պայմանագրային ժամկետը գերազանցող յուրաքանչյուր դեպք համարվում է ջերմային էներգիայի թերմատակարարում:

4.1.3. Նախապես Գնորդի հետ համաձայնեցնել ջերմամատակարարման համակարգի նորոգման այն աշխատանքների տարեկան ժամանակացույցը (հավելված թիվ 2), որոնց կատարման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում ընդհատել կամ սահմանափակել ջերմային էներգիայի մատակարարումը Գնորդին:

4.1.4. Սպահովել Գնորդի լիազոր ներկայացուցիչների ազատ մուտքն իր տարածք՝ չափիչ սարքերի ցուցմունքները գրանցելու եւ սահմանված կարգով անհրաժեշտ զննումներ կատարելու համար:

4.1.5. Գնորդին անհապաղ տեղեկացնել Վաճառողի պատասխանատվության տակ գտնվող առեւտրային հաշվառքի սարքերի խախտման մասին եւ այն վերացնել ոչ ուշ, քան - - - ժամվա ընթացքում: Խախտված հաշվառքի սարքերի կապարակնիքների պոկումը եւ վերանորոգումից հետո նրանց փոխարինումն ու կապարակնիքումը կատարել Գնորդի մասնակցությամբ:

4.1.6. Ջերմամատակարարման համակարգում վթարները վերացնելու կամ կանխելու համար անհետաձգելի միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտության դեպքում, որոնք հանգեցնում են ջերմային էներգիայի մատակարարման ընդհատման կամ սահմանափակման, անհապաղ Գնորդին տեղեկացնել պատճառների եւ վթարների վերացման հնարավոր ժամկետների մասին:

4.1.7. Ոչ ուշ, քան - - - ժամ առաջ, հաստատված ժամանակացույցով Գնորդի հետ համաձայնեցնել ջերմամատակարարման համակարգի նորոգման այն աշխատանքների կատարման ցանկը, որոնք հանգեցնում են ջերմային էներգիայի մատակարարման ընդհատման կամ սահմանափակման:

4.2. Գնորդը պարտավորվում է՝

4.2.1. Ընդունել Վաճառողի կողմից առաքված ջերմային էներգիան՝ սույն Պայմանագրի թիվ 1 հավելվածում նշված ջերմային էներգիայի չափաբանակներին համապատասխան:

4.2.2. Վաճառողին անհապաղ տեղեկացնել մատակարարվող ջերմային էներգիայի ընդհատման, ինչպես նաեւ սպառման համակարգի վթարային դադարեցման եւ ջերմամատակարարման վերսկսման հնարավոր ժամկետների մասին:

4.2.3. Թույլ չտալ ջերմային էներգիայի ապօրինի սպառում եւ հաշվառքի խախտում՝ սպառում առանց Հաշվառքի հանգույցի կամ վերջինիս սարքավորումների հետ կապված տեխնիկական պայմանների խախտումներով, սպառում հաշվառքի հանգույցի կողմնակցումով, հաշվառքի հանգույցի սարքավորումների բնականոն աշխատանքի տեխնիկական պայմանների խախտումներով (հաշվառքի սարքերի կապարակնիքների պոկում կամ խախտում):

4.2.4. Հատուցել 4.2.3 կետում թվարկված ջերմային էներգիայի հաշվառքի խախտումների հետեւանքով Վաճառողի կողմից առաքված եւ չհաշվառված ջերմային էներգիայի համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2.5. Սպահովել իր տարածքում տեղադրված՝ իր եւ ենթասպառողների

առեւտրային հաշվառքի սարքերի անձեռնմխելիութունը:

4.2.6. Հաշվետու ամսվա փաստացի մատակարարված ջերմային էներգիայի առք ու վաճառքի ակտի կազմման համար (Վաճառողի մոտ տեղադրված հաշվառքի սարքերի ցուցմունքների համաձայն) մինչեւ հաջորդ ամսի - - - սպահովել իր լիազորված անձի ներկայությունը: Չներկայանալու դեպքում Վաճառողի կողմից կազմվում է միակողմանի ակտ:

4.2.7. Սպահովել Վաճառողի լիազոր ներկայացուցիչների ազատ մուտք գնորդի տարածք՝ հաշվառքի սարքերի ցուցմունքները գրանցելու եւ սահմանված կարգով անհրաժեշտ զննումներ կատարելու համար:

4.2.8. Սպահովել անհրաժեշտ պայմաններ սույն Պայմանագրի 4.1.7 կետի պահանջները կատարելու եւ Վաճառողի ջերմամատակարարման համակարգի սարքավորումների՝ վթարային իրավիճակում հայտնվելու դեպքում սահմանված կարգով նորոգելու համար:

ՀՈԴՎԱԾ 5

ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՔԱՆԱԿԻ ՉԱՓՈՒՄԸ

5.1. Ջերմային էներգիայի առք ու վաճառքը կատարվում է առաքման կետում, որի քանակը չափվում է հաշվառքի սարքերի միջոցով եւ հաստատագրվում ջերմային էներգիայի առք ու վաճառքի ամենամսյա երկկողմանի ակտով (հավելված թիվ 4): Առաքման կետը եւ հաշվեկշռային պատկանելության սահմանը հաստատող երկկողմանի ակտի ձեւը բերված է թիվ 3 հավելվածում: Առաքման կետը սահմանազատման կետի հետ չհամընկնելու դեպքում ջերմային էներգիայի հաշվառման կարգը եւ կորուստների որոշումը կատարվում է ըստ ՋԷՕԿ-ի:

5.2. Հաշվառման սարքերի քարտագրերի մշակումը կատարվում է յուրաքանչյուր շաբաթվա - - - - - օրը - - - - - կողմից:
Գնորդի եւ (կամ) Վաճառողի

5.3. Վերադարձվող խողովակի քանակի եւ որակի վերաբերյալ հարցերը կողմերը կարգավորում են փոխհամաձայնեցված կարգով:

5.4. Հաշվառքի սարքերի մինչեւ - - - օր չաշխատելու դեպքում մատակարարված ջերմության քանակությունը որոշվում է նախորդ 3 օրվա ընթացքում առաքված ջերմային էներգիայի միջին օրական սպառման չափով: Նշված ժամկետը գերազանցող խախտման դեպքում սպառված ջերմության քանակը որոշվում է հաշվարկային եղանակով՝ ըստ "Ջերմային էներգիայի առաքման եւ սպառման հաշվառման հաշվարկային մեթոդիկայի":

5.5. Առեւտրային հաշվառքի սարքերի պլանային սպասարկումը կատարում է պատասխանատու կողմը՝ ՋԷՕԿ-ով սահմանված կարգով, իսկ կապարակնթումը՝ կողմերը կատարում են համատեղ եւ ձեւակերպում երկկողմանի ակտով: Առեւտրային հաշվառքի սարքերի կապարակնիքների անձեռնմխելիության համար պատասխանատվություն է կրում այն կողմը, որի տարածքում գտնվում են այդ սարքերը:

ՀՈԴՎԱԾ 6

ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Վաճառողի կողմից առաքված ջերմային էներգիայի արժեքը որոշվում է ջերմային էներգիայի առք ու վաճառքի ակտի հիման վրա: Ամենամսյա վճարման ենթակա գումարը հաշվարկվում եւ ամրագրվում է փոխադարձ ակտով:

6.2. Ելնելով ջերմային էներգիայի առք ու վաճառքի ակտից, Վաճառողը կազմում եւ մինչեւ հաջորդ ամսվա 5-ը Գնորդին է ներկայացնում վճարման փաստաթուղթ, որտեղ նշվում է տվյալ ամսվա ընթացքում վճարման ենթակա ընդհանուր գումարը:

6.3. Գնորդը պարտավոր է վճարման փաստաթուղթն ստանալու օրվանից հաշված՝ 20 (քսան) օրվա ընթացքում վճարման ենթացակարգի գումարը փոխանցել Վաճառողի բանկային հաշվեհամարին: Սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Վաճառողը կարող է հիշեցման կարգով (գրություն, հեռախոսագիր, ֆաքս, էլեկտրոնային փոստ եւ այլն) Գնորդին զգուշացնել վճարման ուշացման մասին: Նշված ժամկետում ապառքը չմարելու դեպքում Գնորդը Վաճառողին տույժ է վճարում՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի -----%-ի չափով (բայց 0.1%-ից ոչ ավելի):

Հաշվարկված տույժը չի կարող գերազանցել հաշվարկային ամսում վճարման ենթացակարգի ընդհանուր գումարի 10%-ը:

(6.3 կետը փոփ. 10.08.01 թիվ 35 որոշում)

6.4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով եւ Կողմերի համաձայնությամբ՝ նախատեսված տույժերը կարող են չկիրառվել կամ գիջվել:

(6-րդ հոդվածը խմբ. 19.06.01 թիվ 29 որոշում)

ՀՈՂՎԱԾ 7

ԿՈՂՄԵՐԻ ՊՍՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Վաճառողը՝

7.1.1. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետեւանքով Գնորդի կրած վնասը փոխհատուցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.1.2. Իր կողմից մատակարարվող՝ թիվ 1 հավելվածով սահմանված ջերմային էներգիայի թերմատակարարման դեպքում թերմատակարարված ջերմային էներգիայի դիմաց Գնորդին վճարում է տուգանք՝

սույն պայմանագրով սահմանված կարգով եւ չափով (գրել կարգը եւ չափը),

7.1.3. Մատակարարվող ջերմային էներգիայի թիվ 1 հավելվածով սահմանված որակի խախտման դեպքում փոխադարձ ակտի հիման վրա կատարվում է վերահաշվարկ հետեւյալ կարգով՝

սույն պայմանագրով սահմանված կարգով եւ չափով (գրել կարգը եւ չափը),

բայց ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափից ոչ ավելի

թիվ 1 հավելվածում ամրագրված ջերմային էներգիայի նվազագույն եւ առավելագույն քանակների սահմաններից դուրս բեռնվածքների դեպքում Վաճառողը որակի ցուցանիշների համար պատասխանատվություն չի կրում:

7.1.4. Իր պատասխանատվության տակ գտնվող Գնորդի հաշվառքի սարքերի բնականոն աշխատանքի, մրանց տեխնիկական վիճակի, այդ թվում Գնորդի դրած կապարակմիջոցների խախտման դեպքում պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե սույն Պայմանագրի 11-րդ հոդվածում այլ պայման չի սահմանված:

7.2. Գնորդը՝

7.2.1. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետեւանքով փոխհատուցում է Վաճառողի կրած վնասը՝ սույն պայմանագրով եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2.2. Թիվ 1 հավելվածում ամրագրված ջերմային էներգիայի պայմանագրային չափաքանակների խախտման դեպքում փոխհատուցում է Վաճառողի կրած վնասը հետեւյալ կարգով՝

սույն պայմանագրով սահմանված կարգով եւ չափով (գրել կարգը եւ չափը),

բայց ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափից ոչ ավելի

7.2.3. Պայմանագրում ամրագրված ցանցային ջրի նորմայից ավելի կորստի յուրաքանչյուր դեպքի համար Վաճառողին վճարում է տուգանք, որի չափը սահմանվում է փոխադարձ ակտով:

7.3. Կողմերը սույն Պայմանագրով նախատեսված պայմանագրային պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետեւանք է ֆորս-մաժորային պայմանների:

ՀՈՂՎԱԾ 8

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

8.1. Պայմանագրի շուրջ առաջացած վեճերը հնարավորության սահմաններում լուծվում են Կողմերի միջեւ բանակցությունների միջոցով, անհրաժեշտության դեպքում՝ ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

ՀՈՂՎԱԾ 9

ՖՈՐՍ-ՄԱՅՈՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1. Կողմերը պարտավոր են ֆորս-մաժորային իրավիճակների մասին ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց վերացման կանխատեսվող ժամկետները:

9.2. Ֆորս-մաժորային պայմանների ավարտից հետո Կողմերը պարտավոր են անմիջապես ձեռնարկել միջոցներ՝ իրենց Պայմանագրային պարտավորությունները կատարելու համար:

9.3. Ֆորս-մաժորային պայմանների սկիզբը եւ ավարտը հաստատում է Հայաստանի Հանրապետության համապատասխան իրավասու մարմինը:

ՀՈՂՎԱԾ 10

ԼՐԱՑՈՒՑԻՋ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1. Գնորդը ջերմային էներգիայի որակի վերաբերյալ բողոքները Վաճառողին ներկայացնում է որակի խախտում հայտնաբերելուց հետո - - - ժամվա ընթացքում: Հայտնաբերված խախտումները ամրագրվում են երկկողմանի ակտով:

10.2. Ջերմային էներգիայի պայմանագրային քանակությունների փոփոխությունը

կատարվում է Վաճառողի եւ Գնորդի փոխհամաձայնությունը եւ ամրագրվում փոխադարձ ակտով, որը կցվում է սույն Պայմանագրին: Նախատեսվող փոփոխության օրվանից - - - օր առաջ պայմանագրային քանակությունների փոփոխման համար դիմող կողմը հայտ է ներկայացնում մյուս կողմին:

ՀՈՂՎԱԾ 11

ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ *

ՀՈՂՎԱԾ 12

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ **

12.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրելուց հետո՝ սկսած "- -" - - - - - 199 - թ. եւ գործում է մինչեւ "- -" - - - - - 199 - թ.:

12.2. Պայմանագրի գործողությունը նույն տեւողությամբ եւ նույն պայմաններով համարվում է երկարացված, եթե պայմանագրային ժամկետի ավարտից առնվազն մեկ ամիս առաջ Կողմերից մեկը չի դիմել մյուսին՝ այն դադարեցնելու կամ վերանայելու խնդրանքով:

12.3. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից՝ մեկական յուրաքանչյուր Կողմի համար:

ՀՈՂՎԱԾ 13

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Հավելված թիվ 1 - Ջերմային էներգիայի պայմանագրային մեծությունները
2. Հավելված թիվ 2 - Վաճառողի սարքավորումների նորոգումների ժամանակացույցը
3. Հավելված թիվ 3 - ակտ Վաճառողի եւ Գնորդի հաշվեկշռային պատկանելիության սահմանազատման եւ ջերմային էներգիայի առաքման (առթ ու վաճառքի) կետերի սահմանման վերաբերյալ
4. Հավելված թիվ 4 - Ջերմային էներգիայի առթ ու վաճառքի ակտ
5. Հավելված թիվ 5 - Գնորդի ենթասպառողների ջերմային էներգիայի պահանջարկը

ՀՈՂՎԱԾ 14

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ
ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԸ

Վաճառող	Գնորդ
Հասցեն _____	Հասցեն _____
_____	_____
Հաշվարկային հաշիվ _____	Հաշվարկային հաշիվ _____
_____	_____
Հեռախոս _____	Հեռախոս _____
Հեռագիր _____	Հեռագիր _____
Ֆաքս _____	Ֆաքս _____
Լիցենզիայի թիվ _____	
Ղեկավար՝ _____	Ղեկավար՝ _____
Կ.Տ.	Կ.Տ.

- * սույն պայմանագրի ձեւը չի տարածվում բնակչության վրա
- * պետք է չհակասեն սույն Պայմանագրին եւ ՀՀ օրենսդրությանը
- ** (Արտադրող-փոխադրող) պայմանագիրը ենթակա է գրանցման ՀՀ Էներգետիկայի Հանձնաժողովում եւ ուժի մեջ է համարվում գրանցման պահից:

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1
ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ

" ____ " _____ 199 թ.

ԹԻՎ _____ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՍԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Գերտաք շոգու որակական ցուցանիշները՝

հնշոււնը		Ջերմաստիճանը		Ծախսը տ/ժ (բեռնվածքը)	
կգ/սմ 2	շեղոււնը	oC	շեղոււնը	նվազագուլյն	առավելագուլյն

2. Առաքման կետում տաք ջրի որակական ցուցանիշները՝ ըստ փոխհամաձայնեցված ջերմաստիճանային գրաֆիկի: Շեղոււնը գրաֆիկից չպետք է գերազանցի
+
- _____ % (ոչ ավելի 5 %):

- o ցանցային ջրի ծախսը՝ ոչ պակաս _____ խ.մ/ժ
- o ցանցային ջրի հոսակորուստը Գնորդի ցանցում՝ ոչ ավելի _____ %
ցանցային ջրի ծախսից.
- o հետադարձ ցանցային ջրի ջերմաստիճանը՝ ըստ ջերմաստիճանային
գրաֆիկի, շեղումը ջերմաստիճանային գրաֆիկից ոչ ավելի +
- _____ %:

3. Ջերմային էներգիայի (տաք ջրի տեսքով) տարեկան պայմանագրային մեծությունները

	Սատակարարվող ջերմաքանակը		
	Մոսկովայի մարզում	Սոսնոկոյի մարզում	Սոսնոկոյի մարզում
	Գկալ	Գկալ/Ժամ	Ժամ
Հունվար			
Փետրվար			
Մարտ			
Առաջին եռ.			
Ապրիլ			
Մայիս			
Հունիս			
Երկրորդ եռ.			
Հուլիս			
Օգոստոս			
Սեպտեմբեր			
Երրորդ եռ.			
Հոկտեմբեր			
Նոյեմբեր			
Դեկտեմբեր			
Ջրորորդ եռ.			
ԸՆԴԱՍԵՆԸ		x	x

4. Ջերմային էներգիայի (շոգու տեսքով) չափաքանակն ըստ ամիսների

	Գերտաք շոգի _____ (կգ/սմ 2) Գերտաք շոգի _____ (կգ/սմ 2)	
	Քանակը	Քանակը
	պարամետրերի շեղումը	պարամետրերի շեղումը
	ճնշման ջերմաս-	ճնշման ջերմաս-

	տիճանի				տիճանի			
	տ	Գկալ	կգ/սմ 2	օC	տ	Գկալ	կգ/սմ 2	օC
Հուճկար								
Փետրվար								
Մարտ								
Առաջին եռ.								
Ապրիլ								
Մայիս								
Հունիս								
Երկրորդ եռ.								
Հուլիս								
Օգոստոս								
Սեպտեմբեր								
Երրորդ եռ.								
Հոկտեմբեր								
Նոյեմբեր								
Դեկտեմբեր								
Ջորրորդ եռ.								
ԸՆԴԱՄԵՆԸ			x	x			x	x

5. Խտուցքի վերադարձն ըստ ամիսների

Խտուցքի վերադարձն ըստ ամիսների	ԱՄՍՆԵՐ												
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
սահմանված %-ը առաքված շոգուլ քանակից													

Խտուցքի որակը պետք է համապատասխանի գործող նորմատիվային պահանջներին:

ՎԱՃԱՌՈՂ՝ _____
ստորագրություն

ԳՆՈՐԴ՝ _____
ստորագրություն

_____ (անուն, ազգանուն)

_____ (անուն, ազգանուն)

"__" _____ 199__ թ.

"__" _____ 199__ թ.

Կ.Տ.

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2
ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՏԱՌՔԻ

"___" _____ 199 թ.

ԹԻՎ _____ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՎԱՏԱՌՈՂԻ ՋԵՐՄԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ

Թիվ/Թիվ	Նորոգման անվանումը	Նորոգման սկիզբը	Նորոգման ավարտը
1			
2			
3			
4			
5			
6			
7			
8			
9			
10			

ՎԱՏԱՌՈՂ՝ _____
ստորագրուեթյուն

ԳՆՈՐԴ՝ _____
ստորագրուեթյուն

(անուն, ազգանուն)

(անուն, ազգանուն)

"___" _____ 199 ___ թ.

"___" _____ 199 ___ թ.

Կ.Տ.

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 3
ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՏԱՌՔԻ

"___" _____ 199 թ.

ԹԻՎ _____ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ՎԱՃԱՌՈՂԻ ԵՎ ԳՆՈՐԴԻ ՋԵՐՄԱՍՏԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱԾՎԵԿՇՈՒՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԵՎ ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԱՔՄԱՆ (ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ) ԿԵՏԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ

1. Վաճառողի եւ Գնորդի ջերմամատակարարման համակարգերի հաշվեկշռային պատկանելիության սահմանազատման կետ է սահմանվում _____

_____ տեղադրված փականը:

2. Հաշվառքի հանգույցը տեղակայված է _____

_____ կետում:

3. Գնորդի ջերմային տնտեսության պատասխանատու անձ՝

_____ (պաշտոնը, անունը, ազգանունը) (հեռախոս)

4. Ջերմային էներգիա գնող կողմի պատասխանատու անձ՝

_____ (պաշտոնը, անունը, ազգանունը) (հեռախոս)

5. Ջերմային էներգիա վաճառող կողմի պատասխանատու անձ՝

_____ (պաշտոնը, անունը, ազգանունը) (հեռախոս)

ՎԱՃԱՌՈՂ՝ _____
ստորագրողը

_____ (անուն, ազգանուն)

"__" _____ 199__ թ.

Կ.Տ.

ԳՆՈՐԴ՝ _____
ստորագրողը

_____ (անուն, ազգանուն)

"__" _____ 199__ թ.

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 4
ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ

"__" _____ 199__ թ.

ԹԻՎ _____ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

_____ (ՎԱՃԱՌՈՂ) ԵՒ _____ (ԳՆՈՐԴ)
(ձեռնարկության (ընկերության) (ձեռնարկության (ընկերության)
անվանումը) անվանումը)

Հաշվարկային ժամանակահատված՝ _____

Վաճառված (օգտակար առաքված)
Ջերմային էներգիայի ընդհանուր քանակը՝ _____ Գկալ

այդ թվում՝

Շոգու տեսքով՝ _____ կգ/սմ 2 _____ Գկալ
_____ կգ/սմ 2 _____ Գկալ

Տաք ջրի տեսքով՝ _____ Գկալ

Ջերմային էներգիայի
ընդհանուր արժեքը՝ _____ դրամ

Հաշվարկային ժամանակահատվածում Գնորդի եւ Վաճառողի միջեւ պայմանագրային պարտավորությունների խախտումների դիմաց հաշվարկված տույժ ու տուգանք՝

Վաճառողին՝ _____ հազ. դրամ Գնորդին՝ _____ հազ. դրամ

ՎԱՏԱՌՈՂ՝ _____
ստորագրություն

ԳՆՈՐԴ՝ _____
ստորագրություն

(անուն, ազգանուն)

(անուն, ազգանուն)

"__" _____ 199__ թ.

"__" _____ 199__ թ.

Կ.Տ.

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 5
ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՏԱՌՔԻ

"__" _____ 199__ թ.

ԹԻՎ _____ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ԳՆՈՐԴԻ ԵՆԹԱՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՊԱՀԱՆՁԱՐԿԸ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Թիվ Ենթասպառողի		1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ		
Թիվ անվանումը		_____			_____		
եւ հասցեն		Շոգի-կգ/սմ2	Շոգի-կգ/սմ2	Տաք	Շոգի-կգ/սմ2	Շոգի-կգ/սմ2	Տաք
				ջուր			ջուր
		Գկալ	Գկալ	Գկալ	Գկալ	Գկալ	Գկալ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ		
Շոգի-կգ/սմ2	Շոգի-կգ/սմ2	Տաք ջուր	Շոգի-կգ/սմ2	Շոգի-կգ/սմ2	Տաք ջուր
Գկալ	Գկալ	Գկալ	Գկալ	Գկալ	Գկալ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

